NOUVEL HAY MAGAZINE
SANS FRONTIÈRES

2022թ. առաջին կիսամյակում Հայաստանի՝ ԵԱՏՄ երկրների հետ փոխադարձ առևտուրն աճել է 52,5 տոկոսով. Վարչապետ Փաշինյանի ելույթը՝ Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին

Ուրբաթ, 26 օգոստոսի 2022 թ.



Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ղրղզստանի Չոլպոն-Ատա քաղաքում մասնակցել է Եվրասիական միջկառավարական խորհրդի ընդլայնված կազմով նիստին:

Մինչ նիստի մեկնարկը՝ ԵԱՏՄ անդամ-պետությունների կառավարությունների ղեկավարները մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կազմավորման 10-ամյակին նվիրված նամականիշերի թողարկման արարողությանը:

Վարչապետ Փաշինյանը ընդլայնված կազմով նիստին հանդես է եկել ելույթով, որում, մասնավորապես, նշել է.

«Եվրասիական միջկառավարական խորհրդի հարգելի անդամներ,

նիստի հարգելի մասնակիցներ,

նախ ուզում եմ շնորհակալություն հայտնել մեր ղրղզստանցի գործընկերներին և անձամբ Ակիլբեկ Ժապարովին ավանդական ջերմ հյուրընկալության և այսօրվա միջոցառումը բարձր մակարդակով կազմակերպելու համար:

Անկեղծորեն ողջունում եմ Եվրասիական տնտեսական միության անդամ և դիտորդ երկրների կառավարությունների ղեկավարներին, ինչպես նաև այսօրվա հանդիպման մասնակիցներին և հյուրերին:

Անկասկած, միջկառավարական խորհրդի նիստը լավ հնարավորություն է մի շարք առանցքային հարցերի շուրջ մտքերի փոխանակումը շարունակելու և համաշխարհային տնտեսության՝ վերջին ամիսներին աննախադեպ մասշտաբներ և խորություն ստացած մարտահրավերները նվազագույնի հասցնելու նպատակով փոխընդունելի լուծումներ մշակելու համար:

Չնայած համաշխարհային տնտեսական փոխակերպումներին և ֆինանսական համակարգերի զգալի ցնցումներին, եվրասիական ինտեգրացիայի առավելությունների շնորհիվ առևտրատնտեսական հարաբերություններում որոշակի դրական միտում է նկատվում:

Այս համատեքստում նշեմ, որ 2022 թվականի առաջին կիսամյակում Հայաստանի տնտեսությունն ապահովել է ԵԱՏՄ երկրների հետ փոխադարձ ապրանքաշրջանառության ծավալների զգալի աճ: Այդ ժամանակահատվածում ԵԱՏՄ երկրների հետ փոխադարձ առևտուրը 2021 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 52,5 տոկոսով և կազմել 1,7 մլրդ ԱՄՆ դոլար, ընդ որում՝ ԵԱՏՄ երկրների հետ Հայաստանի արտահանումն աճել է 48,9 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 54,2 տոկոսով:

Նշեմ, որ փոխադարձ առևտրում արտահանման աճի տեմպերն ավելի բարձր են, քան հայկական արտադրանքի արտահանման աճի տեմպերը երրորդ երկրներ: Վստահ եմ, որ հետագա համագործակցությունը ոչ պակաս արդյունավետ կլինի, այդ թվում՝ նոր նախաձեռնությունների իրականացման շնորհիվ:

Եվս մեկ հարց կա, որի վրա կցանկանայի իմ գործընկերների ուշադրությունը հրավիրել: Վերջին ամիսներին Միության արտաքին առևտրի կառուցվածքի փոփոխությունների պատճառով մաքսատուրքերի բաշխման հարցում զգալի շեղումներ են եղել: Ելնելով դրանից՝ անհրաժեշտ ենք համարում առաջիկայում վերադառնալ բաժնեմասերի բաշխման միասնական մեթոդաբանության հաստատման հարցի քննարկմանը:

Հարգելի գործընկերներ,

որպես երեկ՝ նեղ կազմով հանդիպմանը սկսված օրակարգային առանցքային հարցերի քննարկման շարունակություն, կցանկանայի կանգ առնել մեր Միության համար արդիական որոշ ասպեկտների վրա:

Նշեմ, որ Հայաստանի Հանրապետությունը մեծ նշանակություն է տալիս Միության ներսում գազի ընդհանուր շուկայի ձևավորմանը և պատրաստ է կառուցողական երկխոսության՝ չլուծված հարցերի շուրջ կոնսենսուսի հասնելու համար:

Ապրանքների և ծառայությունների ամբողջական միասնական շուկայի հասնելու տեսանկյունից կարևոր ենք համարում

տրանսպորտի և ենթակառուցվածքների ոլորտում ինտեգրացիան: Ճիշտ մոտեցման դեպքում տրանսպորտային-լոգիստիկ ոլորտը կարող է ԵԱՏՄ-ի զարգացման հիմնական շարժիչներից մեկը և միավորման համար մրցակցային առավելություն դառնալ՝ ստեղծելով տարանցիկ փոխադրումների բարենպաստ կազմակերպչական և տնտեսական պայմաններ:

ԵԱՏՄ-ի տրանսպորտային-լոգիստիկ համալիրի կառուցման համար անհրաժեշտ է համաժամանակացնել տնտեսական քաղաքականությունն ազգային և վերազգային մակարդակներում և ապահովել ինտեգրացիոն ենթակառուցվածքային նախագծերի նախագծման ու շահագործման մոտեցումների ընդհանրությունը:

Այս համատեքստում, ցանկանում եմ առանձնահատուկ նշել Եվրասիական զարգացման բանկի և Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի հետ ակտիվ համագործակցությունը՝ ինչպես երկկողմ ձևաչափով, այնպես էլ կոոպերացիոն էֆեկտով ինտեգրացիոն նախագծերի խթանման հարցում: Նոր կոոպերատիվ շղթաների ստեղծումն ու ֆինանսական ինստիտուտների գործիքակազմի օգտագործումն արդյունավետ խթան կծառայեն արդյունաբերական կոոպերացիայի զարգացման համար:

Առաջադրված խնդիրների լուծման ոչ պակաս կարևոր գործոն է թվայնացման առավելությունների օգտագործումը, որն իր հերթին ամուր հիմք է ստեղծում անդամ երկրների՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտում արդյունավետ ինտեգրման և փոխգործակցության համար: Համաշխարհային փորձը հստակ ցույց է տվել, թե որքան նշանակալի կարող է լինել դրա ներդրման տնտեսական ազդեցությունը:

Տնտեսության և առևտրի ոլորտում թվային տեխնոլոգիաների առաջխաղացումը կխթանի առկա խոչընդոտների նվազագույնի

հասցնելը և նույնիսկ ամբողջական վերացումը, ինչն իր հերթին կբարձրացնի տնտեսական կապերի արդյունավետությունը և կկրճատի ծախսերը առևտրում և կոոպերացիոն շղթաներում:

Մեկ այլ կարևոր ոլորտ եմ համարում էլեկտրոնային առևտրի զարգացումը: ԵԱՏՄ երկրների համար էլեկտրոնային առևտրի ոլորտում պետական կարգավորումն ու վերահսկողությունը գնալով ավելի արդիական են դառնում՝ թելադրելով հարկային վարչարարության լավագույն միջազգային փորձին համապատասխան հարկային մեխանիզմների ապահովմամբ հուսալի վերահսկողության համակարգի կառուցման անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով հարցի զգայունությունը՝ անհրաժեշտ է համատեղ ջանքերով օպերատիվ շարժվել էլեկտրոնային առևտրի նորմատիվ-իրավական միջավայրի բարելավման ուղղությամբ:

Ակնհայտ է, որ տնտեսական աճի բարձրացմանն ուղղված միջոցառումները կապված են կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության ոլորտների մի շարք խնդիրների լուծման հետ, և այս կապակցությամբ առաջնային է դառնում ԵԱՏՄ

երկրների միջև տնտեսական բաղադրիչը սոցիալական և հումանիտար նախագծերով ամրապնդելու անհրաժեշտությունը:

Այս տեսանկյունից մենք ողջունում ենք ԱՊՀ և ԵԱՏՄ առաջին երիտասարդական ֆորումի անցկացումը: Հուսով ենք, որ երիտասարդների հետ աշխատանքը հաստատապես կմտնի մեր կազմակերպության օրակարգ, իսկ ֆորումը կդառնա երիտասարդ մասնագետներին ինտեգրացիոն գործընթացների զարգացման ներկա փուլում որոշումների կայացման գործընթացներում ներգրավելու արդիական ձևաչափ: Համոզված եմ, որ ֆորումի այսօրվա մասնակիցներից դուրս կգան նոր առաջնորդներ, որոնք կձևավորեն մեր երկրների պետական քաղաքականությունը:

Պատվիրակությունների հարգելի ղեկավարներ,

վերջում ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլորիդ համատեղ աշխատանքի համար: Հայկական կողմը ևս մեկ անգամ հաստատում է իր պատրաստակամությունը՝ համագործակցելու մեր ընդհանուր օրակարգի առաջմղման գործում՝ ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիների բարեկեցությունն ապահովելու նպատակով:

Շնորհակալություն ուշադրության համար»:

Նիստի ընթացքում քննարկվել են Միության շրջանակում գազի ընդհանուր շուկայի ձևավորմանը, արդյունաբերական կոոպերացիայի ֆինանսավորմանը, տրանսպորտային ինտեգրացիոն նախագծերի զարգացմանը, ալկոհոլային շուկայի կարգավորումներին և էլեկտրոնային առևտրի հարկային վարչարարության առանձին ասպեկտներին վերաբերող հարցեր:

Նիստի ընթացքում որոշում է կայացվել Եվրասիական միջկառավարակն խորհրդի հաջորդ նիստն անցկացնել հոկտեմբերին՝ Երևանում: